# ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «STARMUS UNIVERSE 2007 SL» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «STARMUS FESTIVAL VI 2021» ՓԱՌԱՏՈՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն)՝ ի դեմս նախարար Արայիկ Հարությունյանի, և «STARMUS UNIVERSE 2007 SL» կազմակերպությունը (այսուհետ՝ «STARMUS»)՝ ի դեմս հիմնադիր տնօրեն Գարիկ Իսրայելյանի (այսուհետ՝ Կողմեր), 2020 թ. հունիսի / 25-ին միասին կնքեցին սույն Փոխըմբռնման Հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

Հաշվի առնելով, որ.

(1) «STARMUS»-ը երկու տարին մեկ անգամ կազմակերպում է «STARMUS»փառատոնը, որին մասնակցում են առաջատար գիտնականներ, տիեզերագնացներ, հանրահռչակ երաժիշտներ և արվեստագետներ, ովքեր հանրության հետ կիսում են գիտելիքների հանդեպ իրենց ձգտումը.

(2) Նախարարությունը նախաձեռնել է մի շարք ծրագրեր, որոնց նպատակն է Հայաստանում գիտության և արվեստի խթանումը, հզոր գիտական համայնքի ստեղծումը՝համատեղելով տեխնոլոգիական ուղղվածություն ունեցող արդյունաբերությունը, ուսումնական կենտրոնները և գիտական հաստատությունները.

(3) Նախարարությունը և «STARMUS»-ըունեն գիտության և տեխնոլոգիայի խթանման ընդհանուր նպատակ.

(4) 2021 թվականը կլինի Մարսի վրա առաջին անգամ վայրէջք կատարելու 50-րդ ամյակը, ինչը հիմք է հանդիսանում Հայաստանում «STARMUS VI» փառատոնը հյուրընկալելու համար: Մարդկության համար այս կարևոր քայլը, որը

հնարավոր դարձավ գիտական ակնառու նվաճումների միջոցով, նպաստեց հետագա գիտական աշխատանքներին և տեխնիկական զարգացումներին:

## ԿՈՂՄԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑԻՆ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ

### 1. ԱՌԱՐԿԱՆ

Սույն Հուշագրի առարկան է «STARMUS VI» փառատոնի (այսուհետ՝ Ծրագիր) կազմակերպումը Հայաստանում 2021 թվականին:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Նախարարությունը հանդիսանում է «STARMUS»-ի գործընկերը և հնարավորինս աջակցում է «STARMUS»-ին Ծրագրի կազմակերպման և իրականացման գործում.
2. Կողմերը համագործակցում են Ծրագրի կազմակերպման և իրականացման համար.
3. Հայաստանում անցկացվելիք «STARMUS VI 2021» փառատոնին հատկացված միջոցների ընդհանուր գումարը կազմում է 2.000.000 եվրո (երկու միլիոն եվրոյին համարժեք ՀՀ դրամ): Ծախսերի նախահաշիվը կներկայացվի ամբողջական պայմանագրում.
4. Կողմերը համաձայնվում են, որ ամբողջական պայմանագիրը կստորագրվի սույն Հուշագրի ստորագրման օրվանից 60 (վաթսուն) օրվա ընթացքում: Պայմանագրի փաթեթը պետք է ներկայացվի Նախարարությանը Հուշագրի ստորագրումից հետո.
5. Կողմերը համաձայնվում են, որ Ծրագրի հետ կապված ցանկացած հայտարարություն կամ հաղորդակցություն պետք է համաձայնեցվի մյուս Կողմի հետ:

### 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն Հուշագիրն արտացոլում է Կողմերի մտադրությունները և նրանց համար չի առաջացնում իրավական պարտավորություններ: Կողմերը սույն Հուշագրի

ներքո չունեն որևէ իրավական պարտավորություն, այդ թվում՝ որևէ վերջնական կամ այլ պայմանագիր կնքելու պարտավորություն, անկախ սույն Հուշագրում նկարագրված լինելուց, պայմանով, որ Կողմերը համաձայնում են սերտորեն համագործակցել սույն Հուշագրի շրջանակներում:

2. Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրումից հետո և դադարեցվում է Կողմերի գրավոր համաձայնությամբ:
3. Կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Հուշագիրը՝ առնվազն 1 (մեկ) ամիս առաջ գրավոր ծանուցելով մյուս Կողմին այդ մտադրության մասին:
4. Սույն Հուշագիրը պարունակում է Կողմերի միջև ձեռք բերված բոլոր պայմանավորվածությունները և չի սահմանափակում Կողմերի միջև նախկինում ձեռք բերված նախնական պայմանավորվածությունները:
5. Սույն Հուշագիրը կնքվում է 2 (երկու) հավասարազոր հայերեն և անգլերեն օրինակից: Հակասությունների դեպքում գերակայությունը տրվում է անգլերեն տեքստին: Յուրաքանչյուր Կողմ ստանում է սույն Հուշագրի մեկ բնօրինակ:

Սույն Հուշագիրը ստորագրվում է այս պարտավորության հանդեպ հարգանքով և «STARMUS VI 2021» փառատոնը Հայաստանում կազմակերպելու հստակ մտադրությամբ:

Կողմերը, ի դեմս իրենց լիազոր ներկայացուցիչների, ստորագրեցին սույն Հուշագիրը վերոնշյալ ամսաթվին:

| | |
|---|---|
| ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ | «STARMUS UNIVERSE 2007 SL» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ |
| ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | ԳԱՐԻԿ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ |